ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 7 » ... ապրիլի 2018թ. N 86-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ, ԼՈՌՈՒ, ՍՅՈՒՆԻՔԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԵՐԻՆ «ՌՈԴԻՖԱԿՈՒՄ Ս» ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից 2018 թվականի մարտի 30-ի N 38 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված մոնիթորինգի արդյունքների հիման վրա մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել 2018 թվականի գարնանը մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումների իրականացման համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու, Սյունիքի և Վայոց ձորի մարզերին հատկացվող «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանության միջոցի (այսուհետ՝ բույսերի պաշտպանության միջոց) բաշխացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Կազմակերպության տնօրեն Ն. Բարսեղյանին՝

1) ապահովել բույսերի պաշտպանության միջոցի տեղափոխումը Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու, Սյունիքի և Վայոց ձորի մարզկենտրոններ և

անհատույց հանձնումը մարզպետարաններին կամ վերջիններիս կողմից լիազորված անձանց՝ սույն հրամանի հավելվածով սահմանված չափաքանակներով,

2) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդող ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել հաշվետվություն օգտագործված բույսերի պաշտպանության միջոցի քանակության վերաբերյալ:

3. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Ի. Կարապետյանին՝ վերահսկողություն ապահովել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումների իրականացման նկատմամբ:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Աշ. Հարությունյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված

ՀՀ գուղատնտեսության նախարարի

2018 թվականի ապրիլի 7 -ի N 86 - Ա հրամանի

ԲԱՇԽԱՑՈՒՑԱԿ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԸ ՄԿՆԱՆՄԱՆ ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ, ԼՈՌՈՒ, ՍՅՈՒՆԻՔԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ «ՌՈԴԻՖԱԿՈՒՄ Ս» ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ

Մարզը	Տարածությունը (հա)	Բույսերի պաշտպանության միջոցի քանակը (կգ)
Արագածոտն	1000	80
Լոռի	1205	96,4
Սյունիք	820	65,6
Վայոց ձոր	50	4
Ընդամենը	**3075**	**246**